խարշելով՝ դանդ կ՚ընեմք։ 1498 տարուց յու-նուար 10ին մեծանուն ծովակալ գասա գեա մը և անուանեց Պղնձի գետ (Rio do Cobre), և երկիր մ՚ալ գտնելով՝ անուանը դրաւ երկիր Բարի Ազգաց (Terra da Boâ Gente)։ Հինգ օր այս երկիրը կենալէ վերջ՝ Սոֆալայի եզերքէն նաւելով մարտի առաջին օրերուն մէջ հասաւ Ադրաբ մահմէտականաց հարբուտութեամբ ճոխ Մոզամպիք քաղաքը։ Առաջին անդամ մեծ սէր և ընդունելութիւն կը գտնեն Լուսիտանացիք այս տեղ, բայց հազիւ թէ Ադրաբ կը տեղեկանան ասոնց մահմէտական չլինելուն, մէկէն կը մնաբերեն և կը պատրաստուին զիրենք սպաննելու։ Բայց վաքրոյ ժամանակ վատկելով փութով կը զինեն իր նաւուն երկու մեծ մակոյկները, որոց միոյն վրայ ինքը կը նստի խումբ մը ընտիր զօրաց հետ և միւսն կը յանձնէ Նիկոզայոս նաւապետին, և դիմելով Ադրաբաց նաւերուն վրայ կը հրամայէ իրենց ուրանալ։ անոնք սարսափահար կը սկսին փախչիլ։ Հոս առաջին անդամ հանդիպեցաւ վաքրոյ արաբական մեծամեծ նաւերու, որոց մէջ կը գործածուէր ուղեցոյցն և ծովային քարտէսներ։ Լուսիտանացիք ձեռք կը ձգեն և կ՚ուտրեն այս նաւերէն մէկ քանին, որոց մէջ գտնուած իրերէնները կը բաժնէ վաքրոյ նաւաստիներուն՝ իրեն պահելով միայն քանի մը արաբական գրքեր, զորս միաք ունէր Լիզբոնա դարձած պահուն՝ նաւիրել թագաւորին։ Շամբան շարունակելով կը հասնի նոյն ժամանակ վաճառականութեամբ խիստ ծաղկած Մոմպազա քաղաքը։ Մոմպազացիք այլ կրօնական մոլեռանդութեամբ չէին տարբերիր Մոզամպիքցիներէն, և իրենք ալ փորձեցին վնասել ազնչացնել Լուսիտանական տորմիղն, բայց արիութեամբ և խորագիտութեամբ վաքրոյի բան մը չկրցան ընել։ Մոմպազայէն առաջատները բացուեցան և նաւերն ալսան յառաջ խաղալ դէպ ի Մելինտա, ուր հասնելով մեծ սէր և ընդունելութիւն գտան տեղացիներէն. քաղաքին իշխանն ալ այցելեց Լուսիտանական տորմիղն և մեծապէս պատուեցաւ։

Հ. ՍՈՒՓՈՒԱՆ ԷՓԻՐԻՆԵԱՆ

Շարայարելի

ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Ցպառոդորթիւններ)

(Շար. տես էջ 280)

Բ

ՋՈՒԼՖԱՅԻ ՄԻՆՋԵՒ ԽՈՇ

Պաշտօնեան խորամանկութեամբ աչքի ամփոփումով՝ շրջապատող մարդկանցից ծաւծուկ՝ գլխի զցեց ինձ՝ միայնակ ներս մտնել խրճիթը։ Ես չը հակառակուեցի հետաքրքրքրուելու համար թէ ինչ է կամքը, դիտաւորութիւնը։

— Ներեցէք, պարոն, — ասեց նա՝ ծիսելով ղէյլանը, — որ ձեր այսօրուայ հանդիպումը շատ թանկ նստեց մեզ, որովհետեւ դուք արդելք եղաք մի քանի «վիզէի» մեզ հասանելիք տուրքերի ստացման։

— Ասեցէք, խնդրում ենք, մենք, որ տուգանքներ չանենք, ինչպէս կարող ենք ապրել։ Ճանապարհորդներից շատերը վիրցնում են անցագրերը Թէհրանում, Թաւրիզում և այլ նշանաւոր քաղաքներում, իսկ այդ սահմանագծերի վրա շատ սակաւ է պատահում. հետեւաբար օգտվում են այնտեղի անցակրական պաշտօնեաները և ինչ օգուտ մեզ, եթէ առանց «վիզէի» տուրքի՝ լոկ ձեռնահեռբեան համար նայենք միայն անցագրերին և այնպէս ճանապարհ ձգենք անցորդներին։ Չէ՞ որ անցագրի մենամառութեան իրաւունք ձեռք բերելու համար մենք կառավարութեանը տարէց տարի «իջարայ» ենք վճարում, այն նպատակով որ մէջ տեղը

---

1. Ռամիկ ժողովուրդը՝ ասում է «աչքով արեց»։

արդիւնք ունենանք, մեր արդիւնքն էլ կա-յանում է անցագրերի շատ դուրս գնալու և անցորդներից «վիզէի» տուրքեր առնելու մէջ։ Զունինք ուրիշ եկամուտ, որով կարողա-նայինք ապահովիլ, սա քաղաթ է, սա առուս-տուր է, ինչ ամօթ . . .։

— Դա ոչ թէ առեւտուր է, այլ և առուս-կոռ, — ասեցի ես՝ հազիւ զսպելով իմ բար-կութիւնը. — «վիզէի» ես համարում եմ «ա-կամայ տուրք», որ անինայ փաթաթում էք թշուառ անցորդների վզին։ Դրանով դուք մաքսախոյսների թիւն էք աւելացնում, որով-հետեւ վախենալով «վիզէի» աւելորդ, ծանր և անտեղի տուրքերից, ձեր անախորժ հան-դիպումից ազատուելու յուսով շատ անցորդ-ներ՝ իբր փախստականներ կամ զաչաղներ՝ անցնում են սահմանը, Աբաքսի շատ յար-մարաւոր կէտերից, մանաւանդ գիշերները գաղտնի կերպով..։ Որպէս զի միանգամայն վերջ տրուի այդ տեսակ օրինաց հակառակ զանցառութիւններին, մաքսախոյսների այն գաղտնի գործողական արշաւանքներին, ո-րոնք շատ անգամ արիւնալի հետեւանքներ են ունենում սահմանապահի վրա պահապան գինուորների կողմից, պէտք է ամենից առաջ վերացնել «վիզէի» կոչուած և այլ դրա նման առասպելական տուրքերը, որոնք առաջ են գալիս կառավարական անհաւատարիմ վա-րիչների, չնչինացած անհատների անձնա-կան քմահաճոյքներից ու տրամադրութիւն-ներից . . .։

— Դուք չափից դուրս զայրացած էք ե-բեւում, — ակնարկեց դրսից վաճառականը — հարկ չունիք յամառուել այդ կաշառակեր պաշ-տօնեայի հետ, որ ոչ մի օրինաւոր խօսք չէ ուզում հասկանալ, Թողէք Ալամասեցի այս երիտասարդը «վիզէի» տուրքը վճարի։

— Ինչպէս զսպել զայրոյթը, երբ «վիզէի» տուրքի համար սրա հրամանով մի ժամ ա-ռաջ մի խեղճ մշակի ծեծեցին ֆերաշները, ձեռք ու ոտքը կապկապուած, անգթաբար։ Պէտք է տեսնէիք, որ կարողանայիք զգա-ցուել, քաղաքիրտ մարդն անգամ չէր կա-րող նայել անտարբերութեամբ դէպի կատա-ղուած բռնութիւնը, ուր մնաց ինձ պէս զգա-յունը։ Եւ խեղճին ազատ չը թողին՝ մինչեւ միջամտորիւն չունեցայ ու մինչեւ կառա-վարութեան անունով յանուն իրաւունքի և արդարութեան՝ ապառնալիքներ չը կարդացի.. ինչ և իցէ. ինչպէս տեսնում եմ, այս ոգոր-մելի երկրի մէջ ամեն ինչ դարշելի է և ծի-ծաղելի, ամեն ինչ հրէշային ու վայրենի, եթէ Պարսկաստանի բուն խորքերում, քա-ղաքներում ու գաւառներումն էլ այսպիսի զզուելի բաների հանդիպիմ, մտածում եմ, որ պիտի ոսկումն զատէ ինձ, պիտի ան-շուշտ հիւանդանամ և լրջութիւնս իսպառ կորցնեմ Պարսկաստանը զայրոյն մարդու տեղը չէ, պէտք է քարէ, երկաթէ բնաւ-րութիւն ունեցող մարդ լինի, որ կարողա-նայ այդտեղ համբերել տանել ամեն բան պլատոնական սառնասրտութեամբ։ Ի զուր է Պարսկաստանում «ազատութիւն», որոնել և չեմ յուսալ դիւրութեամբ գտնել այն, որով-հետեւ հոգուս և սրտաբեկութեանս համար միակ մխիթարանքն է խաղաղ անդորրութիւնը, բայց, ամա՛ղ, հակապատկերը . . .։ Ցաւում եմ, որ այժմ իսկ զգում եմ, որ միշտ զայ-լացկոտ, միշտ յուսահատ պիտի տեսնեմ ինձ։ Թէեւ ի հարկէ, մարդ եմ բանա-կան, ունիմ ուղեղ, սիրտ, հոգի, զգացումներ, խորհել, բայց մտածում եմ որ չը պիտի ու-նենամ համապատասխան ընկեր կարեկից, և թէ լինին էլ՝ նրանց գաղափարները թի-թեռնիկների նման թռուցիկ ու խանդաշփոթ, Պարսից դարաւոր նեխուած մթնոլորտի և շրջապատող անպատասխանների, հանգամանք-ների՝ նեղ, սահմանափակ ազդեցութեան տակ ճնշուած, բթացած, փչացուած...։

— Իմ կարծիքով մեզաւորը չէ անցագրա-կան պաշտօնեան, մեզաւորը ինքը կառա-վարութիւնն է, որ անցագրերը տալիս է ա-ճուրդով, այն պայմաններով, որ ամեն մարդ կարող է օգուտի կողմնակի կերպով, — ասեց վաճառականը՝ մանելով խրճիթը։ Բարկու-թիւնս եռապատկուեց։

— Ընդունինք, որ մեզաւորը կառավա-րութիւնն է, բայց ինչու թուլութիւնից օգ-տուելով նրա շնորհած արտօնեալ իրաւունքը միշտ դէպի չարը գործ դնել։ Մթթէ ինքը կառավարութիւնը մանրամասնօրէն գիտէ այն բոլոր գործուած զեղծումները, որ կատարվում

digitised by A.R.A.R.@

են ծոյլ, փողասէր պաշտօնեաներէ ձեռքով։ Կամ գիտէ՞ այն, թէ իր նշանակած «բարեկարգիչները», փոխանակ ժողովրդի ցաւերը բուժելու, նրա հետ սիրով վարուելու, սկսում են կեղեքել նրան և «իրաւունքի» դիմակի տակ ժողովրդին դարձնում են խաղալիք իրանց ձեռքում։ Մի՞ թէ արդարութեան ձայն բարձրացնում կառավարութեան ականջին։ Մեղաւորը մենք ենք խնայէս, որ աշխարհս տեսնում ենք քստմնելի իրողութիւններ և փոքրոգութեամբ տալիս ենք անտարբեր լռութեան, դա նշանակում է մեր լռութեամբ թոյլ տալ այդպիսիներին իրանց սլաքները մեր դէմ ուղղելու։ Սակայն աւելի քան ցաւալի է այն, որ դեռ գտնվում են ձեզ նման մարդիկ, որոնք աշխատում են վարագուրել ապօրինի գործողութիւնները և մասամբ պաշտպան կանգնել այդպիսի խաղաս ցեցերին . . . »

Վաճառականը պահպանեց լռութիւն, որ համաձայնութեան նշան է։ Նա պատասխանեց խրճիթից դուրս գնալ։ Պաշտօնեան խնդոյն ձայնեց։

— Մ՞ւր էք գնում, դեռ «վիզէի» 10 բուրլին չը լմնաբած։ Վաճառականը մնաց խրճիթի շէմքում սառած–զամուած, սկըզբում «հանաք» կարծեց, բայց երբ պաշտօնեան իր պահանջը նորից կրկնեց։

— Ի՞նչ անդգամ, լիրբ է եղել, — դատնալով դէպի ինձ բացականչեց վաճառականը։ Նա այլայլուել էր, գունատուել, չը գիտէր ինչպէս սանձել բարկութիւնը։

— Այդ միջոցին նրա հոգեկան աշխարհում ինչե՞ր ասէք չը կարդացուեր։ Կարծես բարձրից յանկարծակի մէկը կուժով սառը ջուր ածեց նրա գլխին։

— Կարդա՞շ, խաբ դինքն հարիսիդը (եղբայր, խիղճը հաւատի կէսն է) ասեց վաճառականը, բայց ներքին յուզմունքից խօսքը չը կարողացաւ շարունակել։

— Այո՛, խղճի ձայնը Աստուծոյ ձայնն է, — ասեցաբի ես, սակայն ոչ է տուել սրանց խիղճ, գութ, ամօթ, պատասխանք, մարդկային պատիւ. ումից ի՞նչ էք պահանջում...։

— Ներողութիւն եմ խնդրում, պարոն, հազար ներողութիւն, — ձեռքս սեղմելով ասեց վաճառականը թախանձանօք, այն անտեղի անկարգի համար, որ խորհուրդ էի տալիս ձեզ չը յամառուել այդ պաշտօնեայի հետ և մեղադրանքը բարդում էք կառավարութեան վրա՝ աշխատելով դրան արդար դուրս բերել։ Բայց հիմա, ինչպէս նկատում եմ, արդարացի է ձեր բոռն զայրոյթը և ոչ միայն զայրանալ պէտք է, այլ հրապարակով ապտակել և կառավարութեան ուշադրութիւնը այս տխուր հանգամանքի վրա հրաւիրել է հարկաւոր . . . »

— Ես ներում եմ ձեզ, ո՛վ հայազգի վաճառական, և ձեր խօսքերը արժէք կունենային միայն այն ժամանակ, եթէ ձեր շահին դպչող հանգամանքը չը ստիպէր ձեզ այդ արտասանելու . . . » Ասեցէ՛ք, ինչո՞ւ լռեցիք, երբ խօսքը Սալմասեցի երիտասարդից «վիզէի» պահանջելի տուրքի մասին էր, մինչև անգամ դուք ասում էիք թող վճարի, իսկ երբ նոյն պահանջը առաջարկուեց ձեզ՝ դուք ձեր պաշտպանելու ցանկացած պաշտօնեային նոր էք տալիս ունենում անուանարկելու և համոզվում, որ դուք չէր իմ արդար բարկութիւնը նրա սանձարձակ անիրաւոթեան դէմ . . . »

— Ես քեզ ասում եմ, տուր «վիզէի» տուրքը՝ 10 բուրլի, ապա թէ ոչ կը կանչեմ հէնց այս լոպէին ֆերաշներին և քեզ մի լաւ ծեծ կուտեցնեն , — զոչեց դէպի վաճառականը անցագրական պաշտօնեան՝ որոտընդոստ աղաղակով հիմնովին թմբեցնելով փոքրիկ խրճիթի կամարները և առաջնեւ զրուած նախաջրհեղեղեան հնամաշ դաւիթարը (մատեանը) զրուած գետնի վրա զարնելով։

Այդ միջոցին յանկարծ խրճիթի դուռը ՕրՌաց և ներս մտաւ մի պարսիկ՝ թուխ, վամշտոտ դէմքով, պլդիչ աչքերով և յետեւից խուզուած մազերով։ Ներս մտնելուն պէս — ինչ խաբար է, — ասեց նա և ճարպիկութեամբ սկսեց ժողովել գետնին փռուած գաւիթարի ցան ու ցրիւ թերթերը։ Բայց շուտով յանկարծ օրօրեց նա և մոնչալով ընկաւ գետին։ Ցեղից մի քանի անգամ ղղային ցնցումներ և անկանոն թռիչներ գործեց, որպէս զի կարողանայ վեր կենալ, բայց անյաջող։ Գլուխը օրօրեց, աչքերը չուեց, բերանը փրփուրով լցրեց և

digitised by A.R.A.R.@

սիրտը փսխեց, հՀ զազրալի տեսարան։ Մենք ակամայ երեսներս հակառակ կողմը շուռ տուինք, քիչ էր մնում դուրս թռչէինք խրը-ճիթից՝ այդ նեղ, անձուկ վանդակից։

— Գինեմոլ է, հարբած է, — ասեցի ես։

— Մի է սա, — դիմեցի պաշտօնեային։

— Իմ միրզէն է (զրագիրը)։

— Ես ապշեցի։

— Ինչպէս թէ ձեր զրագիրն է — հարցրի ես՝ կարծես չը հաւատալով։

— Այո՛, իմ զրագիրն է, այսօր մօտիցս բացակայ էր, կանչել տուի, որ նայէ օտա-րահպատակների անցագրերին, իսկ պարս-կահպատակների անցագրերի քննութիւնը «ա-ռուծ» և «արեգական» նշանից իմանալով ես ինքն էլ կարողանում կատարել...։

— Այժմ ձեր զրագիրը ինչ կարող է ա-նել, երբ գինու ազդեցութեան տակ ուղեղը դադարած է մտածելուց, խելքը անընդունակ գործելուց։ Նա դեռ չէ զգում իւր զրութիւնը, ոչ ոտի վրա կանգնելն է կարողանում, ոչ խօսելը, ահաւասիկ թաւալւում է մեր աչ-քերի առաջ գետնի վրա անզգայաբար և ան-գիտակցաբար, ուր մնաց թէ անցագրերի քննութիւն կատարելը։

— Եւ հազիւ կարողացայ զսպել իմ ծի-ծաղը և դրա հետ զայրոյթը։

— Ես լսել եմ, որ պարսիկները առհա-սարակ գինի և թէ օղի չեն խմում, որով-հետեւ այդ զրգռեցուցիչ խմիչքների գործա-ծութիւնը սրբապղծութիւն է համարում ձեր կրօնական «շարիաթ» օրէնքը և միանգա-մայն հակառակ ձեր զուրանի աւանդական սովորութիւններին։ Ինչպէս բան է, որ ձեր զրագիրը գինովցել է այսօր և նոյն իսկ տի-րոջ — ձեր ներկայութեամբ — թռղած գործը, ընկել է յիմար վիճակի մէջ, գլուխը կորց-րել։

— Անիծեալ լինին զրանք, զրանց որ-մտից նզովք... կամաց շշնջալով վանա-ռականը դուրս գնաց խրխինից։

— Մեզանից շատերը գործ են ածում այդ խմիչքները, բայց միայն կառավարութիւնից, գլխաւորապէս շարիաթիցս — մոլլաներից ու ոչիչներից ծածուկ։ Եթէ կարելի է ուտել խաղողը, հապա ինչու չը խմել գինին։ Խա-ղող և գինի ինչ զանազանութիւն, եթէ մէկը միւսի արտադրութիւնը չէ...։

Պարսիկ պաշտօնեայի այս վերջին տրա-մաբանութիւն արտայայտած պարզամտութեան վրա միայն հիացայ, մի կարծիք, որով կարծես իւր բերանով ծաղրում էր նա և զատարկ բան համարելով՝ հերքում «շա-րիաթի» այդ յիմար և անմիտ կարգադրու-թիւնը...։

Խրխինում տիրող ապականուած օդից նե-ղուելով՝ դուրս եկայ ես վրդոված դէմքով։ Մօտեցայ փոքրիկ զանակին, ուր ճանա-պարհորդները տալիս են և ստանում ան-ցագրերը։

— Ի սէր Աստուծոյ, վերջացրէք անցա-գրիս գործը, — խնդրեցի պաշտօնեային։ Պաշ-տօնեան լեզուն բերանից դուրս բուսական երկարացնելով՝ թաց արաւ անցագրի հա-կադարձ կողմը և ձեռքի բթամատը մելա-նում թաթախած՝ խփեց նրա վրա իբրեւ զրօշմ։

— Իմդա էլդրմ, — ասեց նա, մեկնե-լով անցագիրը դէպի ինձ։ Ես զարմանալով զարմացայ, երբ ձեռքս առնելով անցագիրը՝ նրանում ոչինչ ստորագրութիւն չը տեսայ, այլ սոսկ մատնահարած մելանի թաթախուն հետք, — որ, չը գիտեմ ինչպէս, քսուելով մի ատարկայի՝ ջնջել — փչացրել ու սեւացրել էր թղթի մի ամբողջ էջը։ Դրանից ակն-յայտնի երեւում էր պաշտօնեայի անգրա-գէտ լինելը, մտածում էի... անցագրերի քննութեան պաշտօնեայ և անգրագէտ, — ինչ ծաղրական բան, ինչ խայտառակութիւն...։ Ես զայրացած — երբեւիցէ տեսնուած բան է, որ անցագրական քննութիւնը կատարուի առանց օրինական ձեւակերպութիւնների և բա-ձանագրութիւնների, կարծես Պարսկաստա-նում այդ բաները ի զուր ժամանակութիւն-ներ. այն ինչ եւրոպայում, քաղաքակիրթ և լուսաւոր երկիրների մէջ, նրբութիւններ, ան-հրաժեշտ պահանջներ և պարտականութիւն-ներ են համարվում...։ Ամէն է ձեզ, որ դեռ խաբում էք թէ զրագէտ էք, բայց ո՞ր է ձեր իսկական կնիքը և ստորագրութիւնը։ Զարմանալի է, երբ գրել և կարդալ չը գի-տէք՝ ինչպէս էք պատահելի թիւրիմացութիւն-

ների առաջն առնում և ստուգում անցագրերի խակութիւնը կամ կեղծիքը...։ Իբրեւ վերջին խօսք յանկիմանեցի անցագրական պաշտօնեային և նրանից երեսս թեքեցի արհամարհանքով . . .։

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆՑ

Շարայարելի

ՄԻ ՁԱՅՆ ԿՈՎԿԱՍԻՑ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐ. ԳՐԱԴԱՐԱՆԸ

Այս գրադարանը, ամէն բանով դանազանւում է նախորդ նկարագրած երկու գրադարաններից, միայն այն բացառութեամբ, որ նախորդ գրադարանների տուած օգուտը աւելի քան շատ է։ Կարելի է հաստատապէս ասել, որ միայն Լժանագիմ գրադարանն է տարածել Թիֆլիսում ընթերցասիրութիւնը ընդհանրապէս, ժողովրդականը մասնաւորապէս։ Բարեգ. ընկ. գրադարանը ունի մօտաւորապէս 6000 օրինակ գիրք։ Ունի նաեւ ընթերցարան, բայց ոչ այնքան մեծ։ Ստացւում է Թիֆլիսում հրատարակւող բոլոր թերթերը, Ռուսաստանից՝ մի քանի հանդէսներ, թերթեր, և արտասահմանից Բաշա-Ջէդ և Հանդէս ամսօրեայ։ Գիրքեր կարելի է գրադարանից տանել տուն* և կարդալ վճարելով 40 կոպէկ ամսավճար, որ շատ թանդ է. (ինչպէս տեղեկացրից երեւում է, մօտաւորապէս 50 բաժանորդ են ունեցել մի տարւոյ ընթացքում.) սրանից կարելի է եզրակացնել, որ գինը մատչելի չէ. հասարակ դասակարգի համար։

Ընթերցարանը ներս մտնելու համար, մասնաւոր անձինք պիտի վճառեն 2 կոպէկ, իսկ աշակերտները 1 կոպէկ։ Եւ այդ բոլորը ոչ կարգ ունի և ոչ էլ կանոն։ Ձեմ մտնում դրադարանի մանրամասնութիւնների մէջ, այլ առաջարկում եմ իրագործման ենթարկել հետեւեալ հարցը։ Թէ մեծ, թէ փոքր աշակերտ, ուսուցիչ կամ հոգաբարձու ի մի խառն, մի սենեակումն են նստում, կարդալու համար։ Սրա վերաբերեալ, պատկառելի ընկերութիւնը պիտի. ուշադրութիւն դարձնի և բոլորը մի տահմանի, մի որոշեալ կարգի դնէ. Թէ որքան վատ հետեւանք ունի այդ խառնիխուռն նստելու ձեւը, աշակերտի, ուսուցչի կամ մեծ ու փոքրի մէջ, դա ցոյց է տալիս իւրաքանչիւր մարդու կամայականութիւնը, իր եսի վերաբերեալ, այն է՝ որ նախ աշակերտը չի համարձակւիլ ուսուցչին պատասել, մինչեւ որ նա մի որ և է թերթ կամ հանդէս կարդալու վերջացնելով ձեռքից վերցնի կամ խնդրի, և երկրորդ, նա այնքան ամաչկոտ կարող է դտնւել, որ ստիպւած պիտի լինի կամայ—ակամայ հեռանալ այդ տեղից, իսկ ուսուցիչը, նկատողութեան է առնում և գիտենալով որ անպատճառ միւս օրը հանդիպելու է իր դասին, այն աշակերտին, որին տեսել է գրադարանում, անարգում է շատ ափեղցիւ խօսքեր շռայլելով աշակերտի հասցէին. ապացոյցը աւելորդ է։ Հասկանալի է, որ ոչ միայն ուսուցչի և աշակերտի մէջ է տեղի ունենում այդ, այլ և մանաւոր անձանց մէջ՝ տեսնելով իրանց կողքին մի երեխային նստած. ուրեմն պարզ է, որ մի ուրիշ բաժանմունքի եւս կարիք է զգացւում։ Այս առաջարկութիւնը ընկերութեան կարող է մի փոքր նեղ դրութեան մէջ ձդել, որովհետեւ այդ բաժանմունքը պահանջում է դրամական ոչ մեծ ծախք, (սակայն այսպիսի ծախքեր կարող է գործադրել և ուրիշ նպատակի համար), օրինակ՝ նախ և առաջ պիտի առանձին սենեակ վարձել, երկրորդ, եթէ գրադարանը այժմ ստանում է իւրաքանչիւր թերթից մի օրինակ, այն ինչ այդ ժամանակ կը պահանջի կրկնապատիկը։

Ընկերութեան, այս հարցի իրագործման համար, կարող ենք յայտնել միայն մեր կար-

---

* Լժանագին գրադարանը նոյնպէս է վարւում, (միայն ամսավճարը աշակերտների համար 50 կ., իսկ բանւորների համար 20 կ.) իսկ ժողովրդական — ոչ. գիրքը միայն կարելի է կարդալ գրադարանում։

digitised by A.R.A.R.@